ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 ապրիլի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

49
(2899)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ «ՀԻԳԻԵՆԱՆ»

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը 2024 թվականի մարտի 20-ին պայմանագիր է կնքել «Ռիելթի մենեջմենթ քոմփանի» ՍՊԸ-ի հետ շենքերի մաքրման ծառայությունների համար:

Պայմանագրի արժեքը կազմել է 4 մլն 641 հազար դրամ, եւ այս ծառայությունը ձեռք է բերվել հրատապ՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

«Ռիելթի մենեջմենթ քոմփանի» ՍՊԸ-ի 100% բաժնեմասը մինչ 2023 թվականը պատկանել է Կարեն Զաքարյանին. այժմ ընկերության իրական շահառուն Նարինե Վարդանյանն է՝նրա կինը:

Ըստ պայմանագրի՝նախատեսված է մաքրել 1,495 քմ տարածք: Մաքրման ենթակա տարածքն իր մեջ ներառում է 160 աշխատանքային տարածք, ըստ երեւույթին՝աշխատասենյակներ, 3 նիստերի դահլիճ, 1 պահեստի/արխիվի տարածք, 3 սերվերային տարածք, 2 մուտքի/սրահի տարածք, 18 սանհանգույց:

Պայմանագրով նախատեսված է, որ մաքրման ենթակա տարածքները պետք է պատշաճ մաքրված լինեն առավոտյան՝ժամը 08:00 դրությամբ:

Նախարարության մաքրման ծառայությունների մեջ են մտնում նաեւ սանիտարահիգիենիկ միջոցները, որոնք հստակ սահմանված են ըստ պայմանագրի:

Օճառը պետք է լինի բարձրորակ Dove ապրանքանիշի: Ըստ պայմանագրի՝27 զուգարանային խցիկի համար անհրաժեշտ է երկշերտ սպիտակ թուղթ, իսկ 3-րդ հարկի ձախակողմյան հատվածի 2 սանհանգույցներում պետք է լինեն բարձր որակի զուգարանի թուղթ, հեղուկ օճառ եւ ափսեները լվանալու բարձրորակ հեղուկ:

Պայմանագրով սահմանված է մեկ տարվա ընթացքում 6 անգամ լվանալ պատուհանները: Ձահերի, առաստաղի եւ պատերի մաքրումը առնվազն պետք է իրականացվի 2 անգամ՝մեկ տարվա ընթացքում:

Հետաքրքիրն այն է, որ սեփական հիգիենայի համար նախարարությանը պարտավորեցնում են պայմանագրով ունենալ ամենաթանկ խնամքի միջոցները, սակայն արցախցուն տրամադրում են ամսական 50 հազար դրամ, որի համար հետո գլուխ են գովում: Եթե զննենք եւ բացահայտենք նաեւ, թե մաքրուհու աշխատանքի համար, ըստ պայմանագրի սահմանված կետերի, որքան աշխատավարձ է սահմանված, ապա կտեսնենք, որ գրեթե 5 մլն դրամը ծախսվում է իշխանավորների բարեկեցության վրա, իսկ մաքրություն ապահովողները, նույնիսկ հերթապահելով, ստանում են 60-70 հազար դրամ:

Արտգործնախարար Արարատ Միրզոյանը եւ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը ընդունել են ընդդիմության առաջարկը. ինչպես ավելի վաղ հայտնել էինք, ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունն առաջարկում է այսօր սահմանազատման եւ սահմանագծման հարցով հրատապ քննարկում անցկացնել: Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի համաձայն՝պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով հրատապ նիստեր կարող են անցկացվել խորհրդարանական հերթական նիստերի ընթացքում: Հրատապ նիստը տեղի կունենա այսօր՝մեկնարկող քառօրյայի երրորդ՝հիմնական նիստում: Որպես հարակից զեկուցողների՝ընդդիմությունն առաջարկել է նիստին հրավիրել փոխվարչապետ, սահմանագծման եւ սահմանազատման հանձնաժողովի նախագահ Մհեր Գրիգորյանին ու արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արարատ Միրզոյանն ու Մհեր Գրիգորյանը ընդունել են առաջարկը եւ մասնակցելու են ընդդիմության նախաձեռնած նիստին: Տեղեկացանք, որ ընդդիմության մյուս առաջարկը, այն է՝հրատապ նիստ անցկացնել բաց ֆորմատով, ՔՊ-ն մերժել է, այսինքն՝նիստը փակ ֆորմատով կլինի:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ապրիլի 16-ին Վճռաբեկ դատարանում կրկին հավաքվելու են Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադեւոսյանը, սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը եւ այլ պաշտոնյաներ, որպեսզի, ի վերջո վերջնական որոշեն, թե ովքեր են այն երեք լավագույն թեկնածուները, որոնց տվյալները ուղարկվելու են Մարդու իրավունքների եվրոպական դատարան: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ մրցույթի ավարտից հետո՝11-րդ օրը ժամանակ է տրվել հանձնաժողովի անդամներին՝ ամփոփեն իրենց մեջ մրցույթը, գնահատեն մասնակիցներին, թե 7 թեկնածուներից ովքեր են լավագույն երեքը, որ կգնան ՄԻԵԴ: Տեղեկացանք, որ հանձնաժողովի որոշ անդամներ դրական են արտահայտվել իրավագիտության ֆակուլտետի դասախոս Աննա Մարգարյանի մասին, ասել է թե՝նա արդեն հանձնաժողովի դրական գնահատականը ունի, իսկ թե ինչ կլինի վերջնարդյունքում, կիմանանք ապրիլի 16-ին: Հիշեցնենք, որ 2019 թվականին Աննա Մարգարյանը ներկայացվել էր ԱԺ՝որպես ԲԴԽ թեկնածու, որին Ազգային ժողովում այդպես էլ չընտրեցին: Հիշեցնենք, որ Հայաստանից ՄԻԵԴ դատավորի պաշտոնի համար մրցակցում են՝Հայկ Ալումյանը, Լիզա Գրիգորյանը, Վահե Գրիգորյանը, Նորա Կարապետյանը, Արմեն Մազմանյանը, Աննա Մարգարյանը եւ Վիգեն Քոչարյանը: Եվ ահա, թեկնածուները սպասում են արդյունքներին:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ՀՀ քննչական կոմիտեն ավարտել է նախաքննությունը՝Երեւանում Լենինգրադի պաշարման ժամանակ զոհված երեխաների հիշատակին նվիրված հուշակոթողի նկատմամբ անհարգալից միջադեպի գործով: Ինչպես հայտնի է, այս տարվա հունվարի 31-ին Հայաստանում Ռուսական տան ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը դիմել էր ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝Երեւանում Լենինգրադի պաշարման ժամանակ զոհված երեխաների հիշատակին նվիրված հուշակոթողի նկատմամբ անհարգալից միջադեպին քրեաիրավական գնահատական տալու: «Ազգամիջյան ատելություն հրահրելը եւ բռնության կոչերը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի դեպքերի հիման վրա, անընդունելի են: Տեղի ունեցածի մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն: Եվ ահա, այս գրությունից մի քանի օր հետո իրավապահները հայտնաբերեցին այն կատարողին: Վերջինս 1978 թվականին ծնված Սամվել Շիրինյանն է: ArmLur.am-ի տեղեկություններով՝նրան գտել էին Բագրատաշենի անցակետից. նա ուզում էր դիմել փախուստի: Հիշեցնենք, որ հունվարի 27-ին քաղաքացի Սամվել Շիրինյանը ցուցադրաբար պոկել եւ տրորել էր Ռուսաստանի Դաշնության դրոշը խորհրդանշող ժապավենները, տապալել էր ծաղկեպսակները՝ այդ ամենն ուղեկցելով Ռուսաստանի հասցեին վիրավորական մեկնաբանություններով եւ գործողությունը Tik Tok սոցիալական ցանցում տեղադրելով»:

ԶՐՈՒՅՑ

«ԲՈԼՈՐԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ԵՆՔ», ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

Քաղաքագետ Սուրեն Սուրենյանցի «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցությունը ապրիլի 6-ին հանրահավաք իրականացրեց Շառլ Ազնավուրի հրապարակում:

Նպատակը գործող իշխանությունների հեռացման շուրջ հանրային եւ քաղաքական կոնսոլիդացիա ձեւավորելն էր:

ArmLur.am-ը հանրահավաքի արդյունքների եւ առաջիկա անելիքների վերաբերյալ զրուցել է Սուրեն Սուրենյանցի հետ:

-Պարոն Սուրենյանց, ինչպե՞ս կամփոփեք հանրահավաքը, արդյունքները Ձեզ համար բավարարո՞ղ էին:

-Իմ կանխատեսումներն իրականացան. առաջին անգամվա համար ակցիան հաջողված եմ համարում, որովհետեւ սա մեր առաջին փորձն էր: Դահլիճային լեփ-լեցուն հանդիպումներից հետո սա հրապարակային հանրահավաքի առաջին փորձն էր, 200-ից ավել մարդ է ներկա եղել, կարեւորը, որ հարթակում երեւացել են նոր քաղաքական գործիչներ, որոնք այլ հարթակներում ակտիվություն առանձնապես չեն ունեցել՝ Դավիթ Ֆիդանյան, Նարեկ Պարոնյան: Ես համարում եմ, որ ստացված էր հանրահավաքը, հաշվի առնենք նաեւ այդ օրվա անկայուն եղանակը:

-Որո՞նք են լինելու Ձեր առաջիկա քայլերը, ունե՞ք ծրագիր:

Մենք գործընթացի մեկնարկն արդեն տվել ենք՝ ապրիլի 20-ին երկրորդ հանրահավաքն են իրականացնելու: Այս հանրահավաքները նպատակ ունեն հասարակության շրջանում գիտակցված դիրքորոշում ձեւավորելու: Հասարակությանը պետք է ոչ թե ինչ-որ պատրաստի բան մատուցեն, այլ փաստարկների ներկայացմամբ հասնենք նրան, որ նրանց մեջ գիտակցություն ձեւավորվի, որ այս իշխանության վարած քաղաքականությունը կանգնեցնում է կոլապսի առաջ, անհրաժեշտ են փոփոխություններ:

Ես կարծում եմ՝ նման փոքր հանրահավաքներով Երեւանի տարբեր հատվածներում եւ մարզերում, մենք մայիս-հունիս ամիսներին կունենանք մի վիճակ, որ կարող լինենք ավելի ընդգրկուն գործընթաց սկսելու, քանի որ ամեն հանրահավաքից հետո նոր մարդիկ են միանում:

Ես գոհ եմ արդյունքներից, քանզի ինքս ռեալիստ եմ, պատրանքներ չեմ ունեցել, թե առաջին հանրահավաքը պետք է մարդաշատ անցնի: Վստահ եմ, որ հաջորդ հանրահավաքին մոտ 400-500 անձի մասնակցություն կլինի:

-Պարոն Սուրենյան, այլ ընդդիմադիր ուժերի հետ պատրա՞ստ եք համագործակցելու, կա՞ն նրանց հետ քննարկումներ:

-Բոլորի հետ բանակցու ենք. առհասարակ, մեր նպատակը կոնսոլիդացված ընդդիմադիր հարթակ ունենալն է:

-Այդ թվում՝ խորհրդարանական ընդդիմության հետ:

-Այո՛, այդ թվում խորհրդարանական ընդդիմության. ոչ ոքի չենք ուզում մեր ընդգրյումից դուրս թողնել, բայց մյուս կողմից էլ կարծում ենք, որ ընդդիմությունը նոր հարթակի անհրաժեշտություն կա: Ես խորհրդարանական ընդդիմության դեմ ոչինչ չունեմ, բայց չէի ցանկանա որ հարթակը նույնական լինի եւ ասոցացվի բոլոր այն շարժումների հետ, որոնք ձախողվել են:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱԼԻԵՎԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՑԱՎ ԱՇԽԱՐՀԻ ԼՌՈՒԹՅԱՆԸ»

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հրամանագիր է ստորագրել օկուպացված Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում դատավոր և քաղաքային դատարանի նախագահ նշանակելու մասին.

ArmLur.am-ը կապ հաստատեց Արցախի Հանրապետության ԱԺ «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մետաքսե Հակոբյան հետ՝ լսելու իր մեկնաբանությունը այս թեմայի վերաբերյալ.

«Իրենք իրենց քաղաքականությունն են վարում, կոնկրետ ինձ համար իրենց ցանկացած քայլ կեղծ է, սուտ, դատարկ, բայց դա քաղաքականություն է, որը վարում է Ադրբեջանը. այսինքն՝ հաստատվելով այնտեղ, ջնջեց մեր մշակութային ամբողջ հայկականությունը, հիմա մեր պետականության բոլոր հետքերն է վերացնում. դա հանցավոր քաղաքականություն է, որն Ադրբեջանն աշխարհի առաջ իրականացնում է: Մեզ համար կանխատեսելի էին այդ քայլերը, բայց հասկանալի ու ընդհունելի չէ աշխարհի դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ: Ադրբեջանը հանցագործ է եւ իր քայլերը չի թաքցնում»:

Պատգամավորի խոսքով՝ Հայաստանի իշխանությունները, պետք է շահագրգիռ կողմը լինեին, սակայան հակառակը՝ իրենք նույնպես միացան աշխարհի լռությանը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Եվրոպական միության խորհրդի Քաղաքական եւ անվտանգային հարցերով հանձնաժողովի անդամներին՝ նախագահ Դելֆին Պրոնկի գլխավորությամբ:

Ինչպես տեղեկանում ենք վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրությունից, Նիկոլ Փաշինյանը ողջունել է պատվիրակության այցը Հայաստան եւ կարեւորել Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության հետեւողական զարգացումը եւ այդ համատեքստում ընդգծել ապրիլի 5-ին Բրյուսելում Հայաստան-ԵՄ-ԱՄՆ բարձր մակարդակի համատեղ հանդիպման փաստը:

ՀՀ վարչապետը շեշտել է ԵՄ օժանդակության կարեւորությունը Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների արդյունավետ իրականացման գործում՝ ընդգծելով, որ ժողովրդավարության հետեւողական զարգացումը ՀՀ կառավարության համար ունի ռազմավարական նշանակություն:

Զրուցակիցները քննարկել են տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին, Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացին վերաբերող հարցեր: Նիկոլ Փաշինյանն ընդգծել է 2022 թ. հոկտեմբերի 6-ին՝ Պրահայում, 2023թ. մայիսի 14-ին եւ հուլիսի 15-ին՝ Բրյուսելում, 2023 թ. հոկտեմբերի 5-ին՝ Գրանադայում տեղի ունեցած հանդիպումների արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունների ի կատար ածման կարեւորությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունն ու Ադրբեջանական Հանրապետությունը 1991թ. Ալմաթիի հռչակագրի հիման վրա փոխադարձաբար ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը:

ՀՀ վարչապետը վերահաստատել է ՀՀ կառավարության հավատարմությունը նշված պայմանավորվածություններին եւ ներկայացրել «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը՝ հավելելով, որ Հայաստանի դիրքորոշումը լիարժեք արտահայտված է վերոնշյալ նախագծում: Տարածաշրջանում անվտանգության եւ կայունության ապահովման գործում կարեւորվել է Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելության դերը:

Անդրադարձ է կատարվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հումանիտար խնդիրներին: Կարեւորվել է միջազգային հանրության հետեւողական աջակցությունը՝ տեղահանվածների սոցիալ-տնտեսական խնդիրները հաղթահարելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԵԽ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը երեկ հանդիպում է ունեցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչի հետ: Հանդիպումը կայացել է ԵԽ ԳՔ՝ Հայաստան պաշտոնական այցի շրջանակներում:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունից հայտնում են, որ հանդիպմանը քննարկվել են Հայաստանի եւ Եվրոպայի խորհրդի միջեւ գործընկերության, ինչպես նաեւ տարածաշրջանային կայունության հարցեր:

Արարատ Միրզոյանն ընդգծել է Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպայի խորհրդի միջեւ կարեւոր ու արդյունավետ համագործակցությունը՝ միտված օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի եւ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտներում ՀՀ կառավարության առաջնահերթությունների ու բարեփոխումների օրակարգի կյանքի կոչմանը: Այս համատեքստում անդրադարձ է կատարվել ՀՀ-ԵԽ 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի իրականացմանը: Նախարար Միրզոյանն ընդգծել է նաեւ նախորդ տարվա սեպտեմբերին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական հարձակումից եւ ԼՂ էթնիկ զտումից հետո ԵԽ արագ արձագանքը, այդ թվում՝ նոր մարտահրավերների հաստեցագրման նպատակով նշյալ ծրագրի հարմարեցման կարեւորությունը:

Մտքեր են փոխանակվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 100 հազար հայերի՝ հատկապես խոցելի խմբերի իրավունքների միջնաժամկետ ու երկարաժամկետ կարիքների հաստեցագրման մասին, ինչի առնչությամբ Արարատ Միրզոյանն ընդգծել է, որ ՀՀ կառավարությունը շարունակում է ջանքերն այդ ուղղությամբ, այդ թվում՝ միջազգային գործընկերների աջակցությամբ:

ՀՀ արտաքին գործերի նախարարը եւ ԵԽ Գլխավոր քարտուղարն անդրադարձել են Հարավային Կովկասում կայուն եւ հարատեւ խաղաղության հաստատմանն ուղղված քայլերին: Այս համատեքստում Արարատ Միրզոյանն ընդգծել է Հայաստանի հանձնառությունն ու ջանքերը՝ նշելով թշնամանքից զերծ մթնոլորտի ձեւավորման, առանցքային հարցերում հստակ հանձնառության կարեւորությունը:

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը ներկայացրել է Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում երկու առանցքային հարցերի՝ տարածքային ամբողջականության ճանաչման վերահաստատման, սահմանների անքակտելության եւ տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման հարցերում Հայաստանի Հանրապետության մոտեցումները: Արարատ Միրզոյանը շեշտել է գործընթացում 1991 թվականին Ալմաթիի հռչակագրի, ինչպես նաեւ միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներին հավատարմության կարեւորությունը:

ՕՐՎԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ՌԱՋՄԱԳԵՐԻՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԴԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁ

«Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը դիմել էր ԱԺ երեք խմբակցությունների և անկախ պատգամավորներին՝ ԱԺ նիստերում կառավարության կատարողականի քննարկումը եզրափակելու, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին անվստահություն հայտնելու ԱԺ որոշման նախագիծ ներկայացնելու և քվեարկության դնելու պահանջով՝ համաձայն ՀՀ սահմանադրության 115 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի:



ArmLur.am-ը զրուցել է «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժման անդամ Արամ Սարգսյանի հետ, ով մեզ հետ զրույցում ասաց, որ պահանջագիրն արդեն ներկայացրել են խմբակցություններին:

«Այսօր՝ (խմբ.) ժամը 4-ին, մենք ժողովրդին հրավիրում ենք հանրահավաքի, որով մեր պահանջագիրը կդարձնենք բաեւ որպես ժողովրդի պահանջ: Այսինքն՝ ոչ թե միայն «Միասին» շարժման պահանջ, այլ «Միասին» շարժման եւ նրան աջակից ժողովրդի պահանջ, որովհետեւ այսօրվա կառավարությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, արդեն տարի ու կես է լեգիտիմ չէ: Մենք այս քայլով մեղադրում ենք նաեւ Ազգային ժողովի պատգամավորներին, որոնք պարտավոր էին իրենց կողմից հաստատված կառավարության ծրագրին հետեւել».- մեզ հետ զրույցում ասաց Արամ Սարգսյանը:

Սարգսյանի խոսքով՝ կառավարությունն ամեն բան արել է հակառակ:

«Երբ կառավարությունն ամեն բան անում էր հակառակ, ընդդիմադիրները պարտադիր պետք է կառավարությանը կանչեին Ազգային ժողով եւ առնվազն բացատրություն պահանջեին. բայց քանի որ կառավարությունն ինքը ոչ մի բան չի արել, որպեսզի գնա Ազգային ժողովում փոխի ծրագրի այս կամ այն հատվածը, իսկ Ազգային ժողովն էլ իր վերահսկողական գործառույթը չի օգտագործել, ապա այսօրվա դրությամբ ԱԺ ամեն մի պատգամավոր դրա համար նաեւ ինքն է պատասխանատու»,- ասաց Սարգսյանը:

Արամ Սարգսյանը նշեց, որ յուրաքանչյուր պատգամավորի վրա իրենք դրել են անհատական պատասխանատվություն եւ արդյունքում պահանջում են, որ կատարողականի քննարկման ժամանակ ֆրակցիաներից որեւէ մեկը կամ նույն 3 ֆրակցիաները, նախագիծ ներկայացնեն առ այն, որ այսօրվա իշխանությունը խախտել է սահմանադրական կարգը:

«Այսինքն՝ իրենք օրինախախտ են այս պահին. ընդունված ծրագիրը իրենք կատարել են օրենքին հակառակ, եւ դա եղել է ռազմավարական ուղղությունների նկատմամբ՝ ե՛ւ բանակի տեսանկյունից, ե՛ւ Արցախի հետ կապված, ե՛ւ արտաքին հարաբերությունների առումով, եթե դուք ուշադիր կարդաք իրենց նախընտրական ծրագիրը եւ իրենց այսօրվա կատարած գործողություններին հետեւեք, ապա կտեսնեք, որ գլխիվայր շուռ են տվել ամեն ինչ»,- եզրափակեց Արամ Սարգսյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԲԱԼԱՆՍԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի կողմից զինատեսակների ձեռքբերումը միտված է տարածաշրջանում սպառազինության խախտված բալանսի վերականգնմանը:

Այս մասին ասել է Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը լրագրողների հետ զրույցում:

«Մենք հիմա կենտրոնացած ենք պաշտպանական խնդիրների լուծման վրա՝ լինի ինժեներական բնույթի, հակաօդային պաշտպանության: Մեր ձեռքբերած կամ ձեռքբերվելիք զինատեսակները միտված են տարածաշրջանում սպառազինության, խախտված բալանսի կարգավորմանը, որովհետեւ դրա խախտումն էր, որ հակառակորդին տվեց հնարավորություն՝ անցնելու ռազմական գործողությունների, մեկ անգամ՝ 2016 թվականին, լայնամասշտաբ՝ 2020-ին»,-ասաց Քոչարյանը:

Նա կարծում է, որ եթե ՋՈՒ-ն իր բարեփոխումների ծավալը շարունակական դարձնի, ոչ միայն բալանսը կվերականգնվի, այլ նաեւ բանակում ծառայողները կունենան այդ ամենը տնօրինելու հմտություններ: Դրան միտված են նաեւ բազմաթիվ այլ ծրագրեր:

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԲԱՔՎԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ

Հայաստանը պատասխանել է խաղաղության պայմանագրի նախագծի վերաբերյալ ադրբեջանական կողմի վերջին առաջարկներին:

Այս մասին տեղեկացրեց արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Անի Բադալյանը:

Նա նշեց, որ խոսքը պայմանագրի նախագծի մասին առաջարկների 8-րդ խմբագրության մասին է:

Օրերս արտգործնախարար Միրզոյանն ասել էր, որ Երեւանն ու Բաքուն խաղաղության պայմանագրի կնքման շուրջ բանակցություններում մի շարք փոխադարձ համաձայնությունների արդեն եկել են, բայց երկու հիմնական հարցի վերաբերյալ կողմերի պատկերացումները դեռ հեռու են միմյանցից: Դրանք են տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման ու հետագա սահմանազատման գործընթացը եւ ենթակառուցվածքների ապաշրջափակումը:

ԵՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ՝ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Եվրամիության խորհրդի անվտանգության եւ քաղաքական հարցերի հանձնաժողովի անդամներն կժամանեն Հարավային Կովկաս:

Տարածաշրջանային այցի ընթացքում նրանք կլինեն Հայաստանում, Վրաստանում եւ Ադրբեջանում:

Հայաստանում նախատեսվում են հանդիպումներ Երեւանում եւ Եվրամիության դիտորդական առաքելության գրասենյակում:

Այցի նպատակն է պատկերացում կազմել տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների եւ հայ-ադրբեջանական խաղաղ գործընթացի մասին:

17-ԱՄՅԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵԿ ԱՆՁԻ ԴԵՌ ՓՆՏՐՈՒՄ ԵՆ

Մարտի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի բաժնում շարունակվում է «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանողի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Հիշեցնենք, որ 17-ամյա երիտասարդը, որ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի հետ տեւական ժամանակ, անձնական հարցի առնչությամբ, գտնվել է թշնամական հարաբերությունների մեջ, կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ էր ստացել սույն թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի Մամիկոնյանց 52/3 հասցեի տարածքում:

Վարույթի շրջանակում ձեռնարկված քննչական անհրաժեշտ գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ միջադեպին մասնակից եւս երկու անձի ինքնություն, ովքեր սպանության կասկածանքով ձերբակալված 21-ամյա երիտասարդի ընկերներն են: Քննիչների եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների համատեղ գործողությունների արդյունքում ընկերներից 21-ամյա երիտասարդը հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին ու ձերբակալվել:

Իրականացված վարութային գործողություններով անհատականացվել են նրանցից յուրաքանչյուրի գործողությունները, որոնց տրվել են իրավական գնահատականներ:

Նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված մեծածավալ միջոցառումների արդյունքում պարզվել է նաեւ միջադեպի ժամանակ տուժողին մահակի գործադրմամբ մարմնական վնասվածքներ հասցրած անձի ինքնությունը, ով 21-ամյա երիտասարդի մեկ այլ ընկերն է, ում նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւ հայտարարվել հետախուզում:

Քննությամբ նաեւ նոր հանգամանքներ են ի հայտ եկել. մասնավորապես, տվյալներ են ստացվել այն մասին, որ կողմերի միջեւ նախկինում տեղի է ունեցել նաեւ այլ միջադեպ, որը վրեժի շարժառիթով դարձել է 17-ամյա պատանու սպանության պատճառ: Դեպքին նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցած այս եւ այլ միջադեպերի առնչությամբ ձեռնարկվում են քննչական, ապացուցողական եւ վարութային անհրաժեշտ միջոցառումներ:

Նախաքննության ընթացքում 21-ամյա մեղադրյալի բնակության վայրում, օրենքով սահմանված կարգով, կատարվել է խուզարկություն, որի ժամանակ հայտնաբերվել են ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող ծալովի դանակը եւ փայտյա մահակը՝ չորացած, արնանման հետքերով, ինչպես նաեւ չորացած, արնանման հետքերով հագուստներ: Կատարվել են միջադեպի այլ մանրամասներ պարզելու ուղղությամբ անհրաժեշտ գործողություններ՝ առերես հարցաքննություններ, տեսագրության զննություններ. խուզարկությամբ հայտնաբերվածի վերաբերյալ նշանակվել են դատակենսաբանական դատաքրեագիտական, իսկ ավելի վաղ՝ նաեւ դատամատնադրոշմային, համալիր դատաբժշկական եւ դատահետքաբանական փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 21-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ վերջինիս վերոհիշյալ ընկերոջը՝ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ 21-ամյա երիտասարդի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որը բավարարվել է: Վերջինիս ընկերոջ նկատմամբ կիրառվել է տնային կալանք խափանման միջոցը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ միջադեպին մասնակից մյուս անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Հետախուզվողին հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու, ինչպես նաեւ քննությանը հետաքրքրող այլ տվյալներ ձեռք բերելու նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություն է տրվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը:

Նախաքննությունը շարունակվում է: Մեզ հայտնի դարձավ, որ հետախուզվողը միջադեպի մասնակիցներից մեկն է եղել, որին դեռ չեն գտել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ SMS-ՆԵՐ

«ԴԵՌ ՉԵ՞Ք ՊԱՅԹԵԼ...»

ՔՊ-ականների հեռախոսներին «Դեռ չե՞ք պայթել, այ...» բովանդակությամբ sms հաղորդագրություններ են ուղարկվում: Դեռեւս փետրվարի 20-ին ՔՊ գրասենյակի, ինչպես նաեւ ՔՊ պատգամավորներ Գուրգեն Արսենյանին եւ Գագիկ Մելքոնյանին պատկանող տարածքներում ռումբ տեղադրելուց առաջ ՔՊ-ականներին նմանօրինակ բովանդակությամբ հաղորդագրություններ են ուղարկել, ինչի մասով ՀՀ քննչական կոմիտեում քննություն է իրականացվում՝ պայթուցիկ տեղադրելու քրեական վարույթի շրջանակներում:

Նկատենք, որ ՔՊ գրասենյակի եւ «Միավորված աշխատանքային կուսակցության» հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու գործով կալանավորվածները չեն ընդունում առաջադրված մեղադրանքը: Գործով կալանավորվածներից են ՀՅԴ անդամ Գագիկ Սարգսյանը եւ Վահան Հովհաննիսյանը:

ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար, 2024 թվականի փետրվարի 20-ին, կիրառելով քողարկման եւ չբացահայտվելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ, քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, իսկ որպես խոցման միջոց՝ հեղյուսներ եւ մանեկներ պարունակող ինքնաշեն պայթեցման սարքեր՝ ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար:

Ապա նույն ժամանակահատվածում պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդ կերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք՝ զուգորդված քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու եւ այլ ծանր հետեւանքներ առաջացնելու վտանգով: Վ.Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել, եւ նշված հետեւանքները վրա չեն հասել պատահականությամբ՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմի՝ հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Նշված արարքները կատարելու պատճառով ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, այդ թվում՝ ահաբեկչություն կատարելու, քրեական հետապնդում է հարուցվել 4 անձի նկատմամբ, եւ բոլորը կալանավորված են:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՏՆՕՐԵՆԻՆ

ԳՈՒՄԱՐԻ ԱՊՕՐԻՆԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

«Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամ»-ի տնօրենին մեղադրանք է առաջադրվել.

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Դավիդ Ռուբիկի Շանոյանը, հանդիսանալով պետության, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված ոչ առեւտրային կազմակերպության՝ «Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամ»-ի տնօրենը, հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար լիազորված լինելով տնօրինել հիմնադրամի գույքն ու ֆինանսական միջոցները, պարտավոր լինելով «Պետության կողմից դրամաշնորհի ձեւով տրամադրվող ֆինանսական աջակցության՝ գումարների օգտագործման մասին պայմանագրով» ՀՀ կառավարության կողմից հատկացված 300.000.000 ՀՀ դրամ գումարն օգտագործել հիմնադրամի կարիքների համար, 2022թ.-ի դեկտեմբերի 20-ին իր՝ որպես հիմնադրամի տնօրենի, եւ քաղաքացի Արայիկ Ռուբիկի Շանոյանի միջեւ կնքված փոխառության պայմանագրի հիման վրա, նշված գումարից 8.800.000 ՀՀ դրամ անկանխիկ փոխանցման եղանակով տրամադրել է հարազատ եղբորը՝ Արայիկ Շանոյանին, որը, պարտավոր լինելով 6 ամսվա ընթացքում վերադարձնել նշված գումարը՝ չի վերադարձրել եւ օգտագործել է իր սեփանական կարիքների համար, ինչի հետեւանքով Դավիդ Շանոյանը՝ «Պետության կողմից դրամաշնորհի ձեւով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրով» իր ղեկավարած հաստատությանը հատկացված գումարից 8.800.000 ՀՀ դրամը չի ծախսել հիմնադրամի ծրագրով, կանոնադրությամբ եւ վերոհիշյալ պայմանագրով նախատեսված նպատակներով եւ հիմնադրամի շահերին պատճառել է առանձնապես խոշոր չափերի՝ 8.800.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 5-ից 8-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 220 դեպք, որից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՋՈՀՎԱԾԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԸ ՎՆԱՍՎԵԼ Է

Ապրիլի 5-ի ուշ երեկոյան, ապրիլի լույս 6-ի գիշերը ադրբեջանական զինուժը խոշոր տրամաչափի գնդացիրներից գնդակոծել է Տավուշի մարզի Բերդ համայնքի սահմանամերձ Մովսես, Ներքին Կարմրաղբյուր, Այգեպար եւ Չինարի գյուղերը. այդ բնակավայրերում վնասներ են պատճառվել: Բերդ խոշոր համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանը հայտնեց, որ ինքը Տավուշի մարզպետարան է ներկայացրել Մովսես գյուղում 6 առանձնատների ու գյուղի գերեզմանատանը վնասված 2 գերեզմանաքարերի մասին տեղեկություն, որպեսզի պետական բյուջեից աջակցություն ցուցաբերվի վնասների համար: Համայնքի ղեկավարն ասաց, որ Մովսեսի գերեզմանատանը ադրբեջանական գնդակոծությունից վնասված երկու գերեզմանաքարերից մեկը Մովսեսի բնակիչ, 2020 թվականի 44-օրյա պատերազմում զոհված ժամկետային զինծառայող Հրանտ Պապյանի գերեզմանաքարն է: Զոհված զինծառայողի գերեզմանաքարը գնդակոծությունից մեծ չափով վնասվել է: «Ժողովուրդ» օրաթերթը համայնքի ղեկավարից տեղեկացավ, որ գնդակոծված բնակավայրերի բնակիչներից կարող են ընդունվել նոր դիմումներ՝ իրենց տներին պատճառված վնասների մասին, քանի որ որոշ բնակիչների առանձնատներ փակ են եղել, դրանց տերերը կարող են հետո իրենց բնակարաններում ադրբեջանական գնդակոծության վնասներ հայտնաբերել: Ա. Հակոբյանը հավելեց, որ ադրբեջանական գնդակոծությունից վնասներ կրած բնակիչներին պետական բյուջեից դրամական աջակցություն չցուցաբերվելու դեպքում տուժած բնակիչներին Բերդի համայնքապետարանի բյուջեից է ֆինանսական օգնություն ցուցաբերվելու:

ԱՅՍ ՏԱՐԻ ԿՆՈՐՈԳՎԻ՞

Բերդ քաղաքից նույնանուն համայնքի Վերին Կարմրաղբյուր տանող ավտոճանապարհը շատ փոսառատ է: Բերդի համայնքապետարանից հայտնել են, որ այդ ճանապարհը համայնքային ենթակայության չէ. նախկինում մի քանի անգամ նշված ճանապարհի հիմնանորոգման մրցույթներ են հայտարարվել, սակայն մրցույթները չեն կայացել, քանի որ դրանց մասնակից շինարարական ընկերություններ չեն եղել: «Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետ հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում է ուղարկել՝ հարցնելով, թե երբ է նորոգվելու Բերդ համայնքի համար կարեւոր նշանակություն ունեցող այդ ճանապարհը: Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «Վ.Կ.Աղբյուրի հանրապետական նշանակության մայրուղու հիմնանորոգման աշխատանքները կիրականացվեն այս տարի, գումարի չափի մասին ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը չունի տեղեկություն, քանի որ աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է ՀՀ ՏԿԵՆ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳԱԱ-Ն ԱՀԱՋԱՆԳՈՒՄ Է

ՀԱՏՎԵՑԻՆ՝ ԱՌԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ-ն ահազանգում է խաբեության մասին՝ Երեւանի ծառերը հատվեցին առանց մասնագիտական եզրակացության.

Օրերս ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կենսաբազմազանության եւ կենսանվտանգության պրոբլեմային խորհրդի նիստում քննարկվեց «Երեւան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող եւ ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր եւ գեղազարդ ծառերով» ծրագիրը:

ԳԱԱ-ից հայտնում են, որ նիստը վարեց ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը: Նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ գիտական ինստիտուտների եւ կենտրոնների տնօրեններ, գիտաշխատողներ, Երեւանի քաղաքապետարանի «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը, զարգացման գծով տնօրենի տեղակալ Արթուր Խալաթյանը, գլխավոր դենդրոլոգ Արծվի Գրիգորյանը, քաղաքապետարանի այլ ներկայացուցիչներ, ոլորտային մասնագետներ շրջակա միջավայրի նախարարությունից, բուհերից, փորձագետներ:

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Գասպարյանը, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Լիլիթ Սահակյանը, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Սարգիս Աղայանը ելույթներում նշեցին, որ ծրագրի վերաբերյալ իրենց ղեկավարած գիտական կառույցներին չեն դիմել կարծիք ստանալու համար, հետեւաբար, իրենք ծրագրի վերաբերյալ կարծիք չեն տրամադրել:

Նշվեց Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի հայտարարությունն այն մասին, որ ժամանակավորապես կդադարեցվի ծառերի փոխարինման ծրագիրը՝ ակնկալելով, որ քաղաքապետարանը գիտական շրջանակներից հիմնավոր փաստաթուղթ կստանա:

Ռուբեն Հարությունյանն ընդգծեց այդ հայտարարությունը եւ հավելեց, որ այն հաստատում է ծրագրում խնդիրների առկայությունը, որոնք չի կարելի անտեսել:

«Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանը մեջբերեց 2023 թվականի փետրվարի 23-ին քաղաքապետարանում տեղի ունեցած գիտաժողովը, որին մասնակցել են գիտնականներ ՀՀ ԳԱԱ ինստիտուտներից եւ կենտրոններից: ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչները նշեցին, որ գիտաժողովին մասնակցությունը գիտական հաստատության պաշտոնական կարծիքի տրամադրում չէ, եւ ծրագրում ներգրավված գիտնականները ներկայացրել են սեփական տեսակետները՝ ակադեմիական ազատության իրենց իրավունքի շրջանակում: Հանրությանը չի ներկայացվել որեւէ գիտահեն հիմնավորում, որտեղ ամփոփված կլինեին առկա խնդիրները եւ դրանցից բխող հետագա քայլերը:

Գնահատելով քննարկման արդյունավետությունը՝ նիստի մասնակիցները ներկայացրեցին հետեւյալ խնդիրները եւ դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան եւ նրա կազմում գործող գիտահետազոտական մասնագիտացված կառույցները, այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը եւ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը չեն ստացել եւ չեն քննարկել «Երեւան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող եւ ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր եւ գեղազարդ ծառերով» ծրագիրը եւ, հետեւաբար, չեն ներկայացրել մասնագիտական կարծիք ծրագրի վերաբերյալ:

ՀՈԱԿ-ին առաջարկվում է ներկայացնել ծրագիրը վերոնշյալ մասնագիտական կառույցներին՝ բազմակողմանի եւ համապարփակ քննարկում կազմակերպելու համար, քանի որ մասնակից բոլոր գիտահետազոտական կառույցների գիտնականները մի շարք առաջարկություններ եւ մտահոգություններ հնչեցրին իրականացվող ծրագրի վերաբերյալ, որոնք կարող են ամփոփվել միայն ծրագրի ամբողջական քննարկման արդյունքներով:

Մասնակիցները ողջունելի համարեցին «Կանաչապատման եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից գիտահեն որոշումներին ուղղված քայլերը, սակայն նման լայնամասշտաբ ծրագրերի քննարկումը կառույցի կողմից ստեղծված գիտական խորհրդում՝ փորձագիտական մակարդակում, բավարար չէ: Նիստի ընթացքում գիտնականների կողմից ներկայացված բազմաթիվ մտահոգություններ, բացեր եւ հարցադրումներ պահանջում են հետազոտություններ եւ առկա տեղեկության վերլուծություն:

ՀՈԱԿ-ին առաջարկվում է պատվիրակել մասնագիտացված կառույցներին հետազոտություններ. այդ թվում ծառագիտական, առաջարկվող տեսակների կլիմայի փոփոխությանը հարմարվողականության, կենսաբազմազանության պահպանության, սանիտարական ռիսկերի (վնասատուների տարածման) էկոլոգիական ռիսկերի (փոշի, աղմուկ եւ այլն), առողջապահական եւ այլ տեսանկյուններից, որոնք հնարավորություն կտան որոշում կայացնող մարմնին ավելի արդյունավետ իրականացնել կանաչապատման միջոցառումները եւ հանրության հետ հաղորդակցությունը, ներկայացնելու ՀՀ ԳԱԱ մասնագիտացված կառույցներին այն գիտական, հետազոտական հենքերը, որոնց հիման վրա որոշում է կայացվել սկսել ծառերի փոխարինումը: ՀՀ ԳԱԱ-ն պատրաստ է հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել համապատասխան կարծիք:

Ծառերի փոխարինման ծրագիրն արդիական է, սակայն ունի կարճաժամկետ բնույթ եւ անհրաժեշտ է դիտարկել կանաչապատման եւ այլ բնապահպանական միջոցառումների իրականացումն ավելի երկարաժամկետ նպատակների եւ խնդիրների լուծման տեսանկյունից, այդ թվում՝ ֆունկցիոնալ կանաչապատման, բնահեն լուծումների եւ լանդշաֆտային-ճարտարապետական առաջադեմ լուծումների կիրառմամբ:

Առաջարկվում է մշակել Երեւան քաղաքի երկարաժամկետ բնապահպանական ռազմավարություն: ՀՀ ԳԱԱ մասնագիտացված կառույցները պատրաստակամ են համագործակցել եւ իրենց ներդրումն ունենալ հանուն կանաչ եւ էկոլոգիապես առողջ Երեւանի:

Բարձրաձայնվեցին եւ քննարկվեցին ծառերի կենսունակության վերաբերյալ տրվող գնահատականի հիմքերը: Մասնավորապես, նշվեց ծառերի կենսունակության եւ տապալման ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ սարքավորումների կիրառման կարեւորությունը:

Առաջարկվում է ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել ծառի կենսունակությունը, յուրաքանչյուր հատվող ծառի պարագայում ներկայացնել կենսունակության հետազոտության արդյունքները, ինչն իր հերթին կբարձրացնի վստահությունը հանրության շրջանում:

ՀՀ ԳԱԱ համապատասխան մասնագետները պատրաստ են աջակցել «Կանաչապատման եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների վերապատրաստման հարցում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 33 պատահար. 2 մարդ զոհվել է, 39-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՈՐԴԵԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ 47 ԵՐԵԽԱ

ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրման ենթակա երեխաների թվաքանակն ըստ տարիքային խմբերի եւ սոցիալական վիճակի, 2023 թվականի երկրորդ կիսամյակում ընդհանուր առմամբ կազմել է 27 երեխա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ որդեգրման ենթակա երեխաների քանակը մայրաքաղաք Երեւանում 14-ն է, Արագածոտնի մարզում՝ 1-ը, Արարատի մարզում՝ 4-ը, Արմավիրի եւ Կոտայքի մարզերում՝ 3-ը, Լոռու մարզում՝ 2-ը: Մյուս մարզերում որդեգրման ենթակա երեխաներ չկան: Նշված 27 որդեգրման ենթակա երեխաներից 11-ը առողջ են, 16-ը՝ առողջական խնդիրներ ունեցող, 4-ը՝ հաշմանդամ: Կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրման ենթակա երեխաների թվաքանակը 2023 թվականի ընթացքում կազմել է 47 երեխա:

Հաշվառված երեխաների հիմնական մասը ՀՀ քաղաքացիներ են: Կենտրոնացված հաշվառման վերցված որդեգրողի թեկնածուների թվաքանակը կազմել է 157:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ» ՎԱՃԱՌՎԵՑ

Ամերիաբանկ» ՓԲԸ-ն վաճառվեց. կառուցվածքում փոփոխություններ են արվել: Տեղեկությունը հայտնում է բանկի պաշտոնական կայքը:

«Բաժնետերերի եւ կարգավորող մարմինների բոլոր անհրաժեշտ հաստատումները ստանալուց հետո բանկի վաճառքի գործարքը կնքվել է, եւ «Ամերիաբանկի» բաժնետերերի կառուցվածքի համապատասխան փոփոխությունները գրանցվել են»,- ասված է հաղորդագրությունում:

Նշենք, որ շուրջ 1 ամիս առաջ հայտնի դարձավ, որ բանկի բաժնետոմսերը կգնի «Վրաստանի բանկը»՝ Լոնդոնի ֆոնդային բորսայում գրանցված «Bank of Georgia Group»-ը, բանկում իր բաժնեմասնակցությունը 10%-ի չափով կպահպանի Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ): «Վրաստանի բանկ» ընկերության մամուլի ծառայությունը հայտարարեց, որ «Bank of Georgia Group PLC»-ը 303,6 մլն դոլարով կգնի «Ամերիաբանկը»:

Հիշեցնենք՝ նախկինում «Ամերիաբանկի» բաժնետերերն էին «Իմաստ Գրուպ» ընկերությունը (նախկին «Ամերիա Գրուպը», որի բաժնետոմսերի 48,82%-ը հիմնադրվել է Ռուբեն Վարդանյանի կողմից), Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (17,71 %), Ասիական զարգացման բանկը (13,91 %), ինչպես նաեւ «ESPS Group»-ը, որում ընդգրկված են «Ameria Group»-ի մի շարք մենեջերներ (12,05%):

2023 թ. տարեվերջի դրությամբ «Ամերիաբանկի» ակտիվները կազմել են 1 տրլն 410 մլրդ դրամ: Ակտիվների ծավալով բանկը տարիներ շարունակ ՀՀ-ում առաջատարն էր, սակայն վերջին տարիներին առաջատարին դիրքերը զիջել է «Արդշինբանկին»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանն ընդունել է «Humanitarian Aid Relief Trust» (HART) բարեգործական կազմակերպության պատվավոր նախագահ, բարոնուհի Քերոլայն Քոքսի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում են եղել կազմակերպության գործադիր տնօրեն Սեմ Մեյսոնը, ծրագրերի համակարգող Դեյվիդ Թոմասը, կազմակերպության աջակից Դեյվիդ Ռոդսը, քաղաքական գործիչ Գեւորգ Քեփենիկյանը, «Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոն» ՀԿ նախագահ Վարդան Թադևոսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության գործընթացին առնչվող մի շարք հարցեր. անդրադարձ է կատարվել նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների որակի բարելավման ու անկախ կյանքի կենտրոնների ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին:

Անդրադառնալով սոցիալական պաշտպանության ոլորտում աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից սահմանված գերակայություններին՝ նախարար Մկրտչյանը ներկայացրել է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց աջակցության տրամադրման գործընթացը. նա խոսել է հայրենակիցներին ուղղված միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրերի իրականացման ուղղությամբ ՀՀ կառավարության տեսլականի մասին՝ նշելով, որ վերջիններիս կենսապայմանների բավարարումը շարունակում է մնալ պետության ուշադրության առանցքում:

Ներկայացնելով հավասար հնարավորությունների ապահովման ոլորտում իրականացվող աշխատանքները՝նախարարը մանրամասնել է անկախ կյանքի կենտրոնների ստեղծման ուղղությամբ նախատեսվող քայլերը. զրուցակիցներն անդրադարձել են նաեւ տարեցներին, հոգեկան եւ մտավոր առողջության խնդիրներ ունեցող անձանց պետության կողմից պատվիրակվող ծառայությունների շրջանակին: Բարոնուհին նշել է, որ HART-ը եւս պատրաստ է ներգրավվել անհրաժեշտ ծառայությունների տրամադրման գործընթացում:

Քերոլայն Քոքսը շնորհակալություն է հայտնել նախարարին իրականացվող ծրագրերի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրամադրելու համար եւ պատրաստակամություն հայտնել շարունակելու անհրաժեշտ ջանքեր ներդնել համագործակցության զարգացման ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԿ ԱՄՍՈՒՄ՝ ՔՈՒԹԵՇԻ 262 ԴԵՊՔ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2024 թվականի փետրվար ամսին գրանցվել է քութեշի վարակման 262 դեպք:

Վիրուսային բռնկման այդ ժամանակահատվածում գրանցվել է նաեւ ջրծաղիկի 1 754 դեպք, որից 1 614 դեպքը մինչեւ 18 տարեկանների շրջանում:

Առողջապահության նախարարությունից տեղեկացանք, որ քութեշի, ինչպես նաեւ այլ օդակաթիլային վարակներին բնորոշ է սեզոնայնությունը: Հիվանդացությունն ունի օրինաչափություն՝առավել հաճախ հանդիպում է աշնան-ձմռան ամիսներին եւ նվազում է ամռանը, ինչպես նաեւ բնորոշ է պարբերականությունը՝ 4-7 տարի: Քութեշով հիվանդացության մակարդակը հիմնականում պայմանավորված է մանկական տարբեր հաստատություններ հաճախող նախադպրոցական տարիքի երեխաների վարակակիր դառնալու հանմգամանքով: Մանկական նախակրթարաններ կամ ուսումնական հաստատություններ հաճախող երեխաները 3-4 անգամ ավելի հաճախ են հիվանդանում, քան չհաճախողները:

ArmLur.am-ը օրերս գրել է, որ քութեշի բռնկման պատճառով Երեւանում փակվել էին մանկապարտեզի խմբեր:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Fastex-ը եւ Երեւանի պետական համալսարանն ստորագրել են համագործակցության հուշագիր՝կրթական եւ գիտահետազոտական համատեղ լրացուցիչ ծրագրեր ու նախագծեր իրականացնելու նպատակով:

Համագործակցության շրջանակում Fastex-ի կողմից մշակվելու են «Բլոկչեյն եւ վիրտուալ ակտիվներ» թեմայով կարճաժամկետ դասընթացներ եւ մագիստրոսական ծրագիր: ԵՊՀ ուսանողները հնարավորություն են ունենալու պարբերաբար մասնագիտական պրակտիկա անցնել Fastex-ում, իսկ մագիստրոսական ծրագրում լավագույն առաջադիմությունը ցուցաբերած եւ Fastex-ի կողմից ընտրված ուսանողներին հատկացվելու է անվանական կրթաթոշակ՝ ուսման վարձի մինչեւ 100 տոկոս փոխհատուցմամբ: Երեւանի պետական համալսարանն զբաղվելու է անհրաժեշտ տեխնիկայի, լսարանների եւ լաբորատորիաների ապահովման հարցերով:

Fastex-ԵՊՀ գործընկերությունը միտված է մեր երկրի գիտակրթական ներուժի լիարժեք իրացմանը, եւ մասնավորապես, բլոկչեյնի ու վիրտուալ ակտիվների ուղղության խթանմանը: Հուշագրով Fastex-ն իր պատրաստակամություն է հայտնում՝ լավագույն ջանքերը ներդնելու երիտասարդության շրջանում մասնագիտական բարձրորակ կրթության ապահովման ուղղությամբ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում շարունակվելու է «Քի էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին («Հայբիզնեսբանկ» ՓԲԸ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտի աճուրդի փուլերը՝

քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա 40 շենք՝ թիվ 82/31 հասցեում 15.04.2024թ.-ին՝ ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր,

«Ժողովուրդ» օրաթերթի 23.05.2023 թվականի թիվ 72 (2738) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման» մեջ նշված պայմաններով.

- ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Ծ. Իսակովի պողոտա, 13/5 հասցեում գտնվող 0,4475 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 695000000 ՀՀ դրամ: Աճուրդի ավարտը՝30.12.2024թ.:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱԲԼՈ ՊԻԿԱՍՈ

ՆԿԱՐՉԻ ՖԵՆՈՄԵՆԸ ԵՎ ՀԵՏԱՔՐՔԻՐ ԿՅԱՆՔԸ

Սենյակը տաքացնելու համար նա այրել է սեփական կտավները, հարցաքննվել «Մոնա Լիզա»-յի գողության համար, երկու անգամ ամուսնացել է եւ աղօրինի զավակ ունեցել. Պաբլո Պիկասո ֆենոմենն ու կյանքի հետաքրքիր դրվագները:

1973 թվականի ապրիլի 8-ին՝ 51 տարի առաջ, մահացել է աշխարհահռչակ իսպանացի նկարիչ, գծանկարիչ, քանդակագործ եւ կերամիկայի մասնագետ Պաբլո Պիկասոն:

Նկարիչը, ով իր կյանքի մեծ մասն անց է կացրել Ֆրանսիայում, հայտնի է որպես կուբիզմի հիմնադիր: Տարբեր նկարչական ոճերի զարգացման հարցում մեծ դեր ունեցած Պիկասոն երիտասարդ տարիներին հիմնականում ստեղծագործել է ռեալիստական ոճում, իսկ ավելի հասուն տարիքում անցում կատարել նոր ոճերի՝ տեսությունների, տեխնիկաների եւ գաղափարների ազդեցությամբ: Հենց այս արտիստիկ գործերն էլ նկարչին համաշխարհային ճանաչում են բերել՝ նրան դարձնելով 20-րդ դարի արվեստի ոլորտի ամենահայտնի ներկայացուցիչներից մեկը:

Իսպանիայի Անդալուզիա շրջանում ծնված Պիկասոն ընտանիքի առաջին զավակն էր: Աղքատ ազնվականներից սերող հայրը տեղի թանգարանի վարիչն էր եւ Կրաֆտա դպրոցի արվեստի պրոֆեսորը, որը հիանալի նկարում էր թռչունների պատկերներ. նկարչական տաղանդն ու նախասիրությունը Պաբլոն ժառանգել է հենց հորից:

Առաջին փորձերը պատանի Պիկասոն անում է հոր նկարների էսքիզների վրա: Ավանդույթի համաձայն՝ բացահայտելով որդու տեխնիկայի ճշգրտությունը, հայրը զգում է, որ իր 13-ամյա որդին գերազանցել է իրեն եւ ցանկացել է թողնել նկարչությունը:

1895 թվականին Կորունա տեղափոխված ընտանիքը կորցնում է Պիկասոյի կրտսեր քրոջը եւ մշտական բնակություն հաստատում Բարսելոնայում: Հոր ջանքերի եւ ծանոթությունների շնորհիվ Պաբլոն կարողանում է դիմել ակադեմիա, որի ավարտական քննությունները վերջնարդյունքի է հասցնում մեկ շաբաթում, հակառակ նրան, որ այն սովորաբար ուսանողների շրջանում տեւել է մոտ մեկ ամիս: Հենց ակադեմիայում էլ Պաբլոն ձեռք է բերում այն շրջապատը, որը մեծ ազդեցություն է ունենում իր հետագա ստեղծագործական կյանքի վրա:

Ակադեմիական կրթությունից հետո հայրն ու հորեղբայրը երիտասարդին ուղարկում են Մադրիդի Սան Ֆեռնանդոյի գեղարվեստի թագավորական ակադեմիա, ինչն էլ լինում է նրա առաջին միայնակ ճանապարհորդությունը:

1900 թվականին Պիկասոն առաջին անկամ մեկնում է Փարիզ, որը ժամանակի Եվրոպայի՝ արվեստի մայրաքաղաքն էր համարվում. այնտեղ է նկարիչը հանդիպում է լրագրող եւ բանաստեղծ Մաքս Ջակոբսին, որը օգնում է նրան ֆրանսերեն սովորել: Պիկասոյի կյանքի այս ամենաաղքատ ժամանակներում բազմաթիվ արվեստի գործեր այրվել են փոքրիկ սենյակը տաքացնելու համար:

1901 թվականին Պիկասոն 5 ամիս ապրում եւ ստեղծագործում է Մադրիդում, որտեղ ընկերոջ հետ բացում է «Նոր արվեստ» սրահը:

Ավելի ուշ Պիկասոն, որն արդեն նկարների տակ մակագրում էր «Պիկասո», ծանոթանում է Սթեյն եղբայրների հետ, որոնք մեծ հետք են թողնում իր արվեստի վրա. հայտնի ամերիկացի կոլեկցիոներները սկսում են գնել Պիկասոյի գործերը: Գերթրադ Սթեյնը Պիկասոյի նկարների ցուցահանդեսներն է կազմակերպում Փարիզի իր տանը կից ոչ պաշտոնական ցուցասրահում: Նա հասցնում է մեծ շրջապատ ձեռք բերել եւ նույնիսկ հարցաքննության է կանչվում «Մոնա Լիզայի» կտավի գողության գործով:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՖԻԼՄԵՐԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ՝ ԴՈՒԲԱՅՈՒՄ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը հրավիրված է մասնակցելու մայիսի 9-13-ը Դուբայում կայանալիք Ֆիլմերի երաժշտության փառատոնին:

Սիմֆոնիկ նվագախումբը, որպես փառատոնի պաշտոնական նվագախումբ, կունենա 5 համերգ, որոնց ընթացքում կհնչեն հայտնի ֆիլմերի սիրված մեղեդիները:

Փառատոնի շրջանակներում մայիսի 9-10-ին համերգային երեկոներ կնվիրվեն իտալացի կոմպոզիտոր, «Օսկարի» կրկնակի եւ «Ոսկե գլոբուսի» եռակի դափնեկիր, լեգենդար Էնիո Մորիկոնեի կինոերաժշտությանը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը եւ փառատոնի երգչախումբը կղեկավարի Մարիկոնեի որդին՝ դիրիժոր Անդրեա Մարիկոնեն:

Մայիսի 11-ին հրավիրված համերգը կրում է «Աստղային պատերազմներ» խորագիրը, որի ընթացքում կհնչի ամերիկացի կոմպոզիտոր Ջոն Ուիլյամսի գրած կինոերաժշտությունը:

Այս երկու համերգները կղեկավարի Էնթոնի Գաբրիելը:

Մայիսի 13-ին կայանալիք համերգը կներկայացնի Չարլի Չապլինի ֆիլմերի երաժշտությունն ու ունկնդրին կփոխանցի համր կինոյի հմայքը: Երեկոն կղեկավարի դիրիժոր Թիմոթի Բրոքը:

Համերգները կկայանան Դուբայի օպերայում:

ՄԱՐԶԱԿԱՆ

3 ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ՝ 14 ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

2027 թվականի ծանրամարտի աշխարհի առաջնությունն անցկացվելու է Հայաստանում: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը կարեւորում է այդ առաջնությունը:

«Դեռեւս ծանրամարտի Եվրոպայի առաջնությունից հետո, երբ ամփոփեցինք այն, ինչ ունենք, հասկացանք, որ բացառիկ վերաբերմունք է եղել, առաջնությունն էլ բացառիկ էր: Եվ դրա վառ վկայությունը լեցուն տրիբունաներն էին, որոնք, ցավոք, չտեսանք Բուլղարիայում անցկացվող առաջնությանը, որտեղ ներկա էր մեկ ավտոբուս մարդ»,-ասաց Գիլոյանը:

Վերջինիս խոսքով՝ սպորտը երկրպագուների համար է եւ Հայաստանում երկրպագուների ներկայությունը կարեւորվում է:

«Մինչեւ 2027 թվականը հեշտ չի լինելու: Մենք առաջիկա 3 տարվա համար 14 զանազան սպորտային միջոցառում ենք հյուրընկալելու, ընդ որում՝ նաեւ խաղային ձեւերից եզրափակիչ մրցաշարեր: Նախորդ 2 տարում Հայաստանում այնքան բարձրակարգ մրցում է եղել, որքան չի եղել Խորհրդային միության 70 եւ հետխորհրդային 27 տարիներին»,-առանձնացրեց նա:

Ծանրամարտի միջազգային ֆեդերացիան որոշում է կայացրել 2027 թվականի աշխարհի առաջնության անցկացման իրավունքը վստահել Հայաստանին:

ԵՐԵՔ ՀԱՅ ՀՐԱՁԻԳ՝ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՄՐՑԱՇԱՐԻՆ

Հայաստանի հրաձգության հավաքականը բրազիլական վարկանիշային մրցաշարին կմասնակցի 3 մարզիկով:

Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում ապրիլի 11-20-ը կկայանա օլիմպիական վարկանիշային հերթական մրցաշարը: Այն կլինի 10մ մրցաձեւում ուղեգրերի ձեռքբերման վերջին հնարավորությունը: 25մ եւ 50մ մրցաձեւերում դեռ խաղարկվելու են ուղեգրեր այս ձեւերի Եվրոպայի առաջնության ժամանակ:

Վարկանիշային այս մրցաշարի յուրաքանչյուր մրցաձեւում կխաղարկվի 2 օլիմպիական ուղեգիր: Հայաստանն այս մրցաշարում կներկայացնեն հրաձիգներ Հրաչ Բաբայանը, Էլմիրա Կարապետյանը, Բենիկ Խլղաթյանը:

ՍՊԵՐՑՅԱՆԸ՝ ԴՈՒԲԼԻ ՀԵՂԻՆԱԿ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը դարձել է դուբլի հեղինակ ակումբի կազմում:

Ռուսաստանի ֆուտբոլի առաջնության 23-րդ տուրում «Կրասնոդար»-ն արտագնա խաղում մրցեց «Պարի Նիժնի Նովգորոդ»-ի հետ եւ առավելության հասավ 3:4 հաշվով:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմից Էդուարդ Սպերցյանը «Կրասնոդար»-ի կազմում դարձավ դուբլի հեղինակ եւ անցկացրեց իր 100-րդ հանդիպումը թիմի կազմում:

● *Ապրիլի 14-ին՝ ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա Համո Սահյանի 110-ամյակին նվիրված հոբելյանական երեկո: Տոմսերի արժեքը՝ 3000-10.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ արտոնություններ ունեն հաշմանդամները:

Սիրան Պողոսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝

- ընդգրկված են բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում եւ կարող են օգտվել սահմանված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու արտոնություններից,
- ընդգրկված են անվճար եւ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի ցանկում: 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվել անվճար դեղեր ձեռք բերելու արտոնությունից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից,
- ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող եւ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում,

I 1-ին եւ 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,

I իրավունք ունեն ստանալու աջակցող միջոցներ՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական եւ այլ օժանդակ միջոցներ՝ համապատասխան վերականգնողական անհատական ծրագրին, պետական հավաստագրի հիման վրա:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչեւ 18 տարին լրանալը եւ անժամկետ:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ չափանիշներ են հաշվի առնվում վարկ տրամադրելիս: Արդյոք այդ չափանիշների առկայության դեպքում բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավո՞ր է դիմողի հետ կնքել վարկային պայմանագիր:

Համլետ Հարությունյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, գնահատելով վարկը մարելու հաճախորդի հնարավորությունը, ինքն է որոշում՝ կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Վարկունակությունը գնահատելու նպատակով կարող են հաշվի առնվել հետեւյալ հանգամանքները՝

աշխատավարձի եւ այլ եկամուտների առկայությունը,
վարկային պատմությունը,
անշարժ եւ այլ գույքի առկայությունը,
երաշխավորների առկայությունը,
տարիքը,
այլ հանգամանքներ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության եվ վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Երեկ Թումանյան եւ Նալբանդյան փողոցների խաչմերուկը կաթվածահար վիճակում էր: Հետիոտնային անցման համար նախատեսված լուսացույցը ճանապարհի մի կողմում անսարք էր, մյուս կողմում պարզապես բացակայում էր: Ձողը, որը նախատեսված էր լուսացույցի եւ թեքահարթակի առկայությաան նշանի համար, պոկված եւ նետված էր գետնին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	- 3 - 6 +14 + 17
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 +21 + 23
Գեղարքունիք	- 3 - 6 +13 + 16
Լոռի	- 1 + 3 +17 + 21
Տավուշ	- 1 + 2 +18 + 22
Արագածոտնի լեռներ	0 + 3 +14 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 +21 + 24

Արարատ	+ 2 + 5 +24 + 26
Արմավիր	+ 1 + 4 +15 + 17
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 +21 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 +24 + 26
Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 +24 + 26
Սյունիքի նախալեռներ	- 1 + 3 +23 + 25
ԼՂՀ	- 1 + 3 +22 + 24
Երեւան	+ 6 + 8 + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*